



Պարկան գինն է . . . 140 ռուբ.
Վեցամսեայ . . . 75 .
Եռամսեայ . . . 40 .
Մէկ ծանուցումը տողին 3 դուբուշ է :
Պարագրուծիւնները կանխիկ են :
Պարագրուծիւնները ամեն ամսոյն 1 թիւ
է. 16 թիւ է. 4 թիւն :

Դուրս ելած լրագրողներուն ծածուկ
ծախքը առնողին վրայ էր
Լրագրողս վերաբերեալ նման կամ որ
եւ իցէ դրուծիւն, խմբագրին պիտի
ուղղուի . եւ ասոնք ծածուկ ծախք
քը կրկնուին վրայ է :

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԲԱՂԱՔԱԿԱՆ

ԿԱՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 22 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Յեղափոխութիւնը վերջապէս տա-
պալեցիր դէմը եւ թողոր արգելքները
եւ Խտակոյ թերակղզոյն տիրապետեց :
Եւ ինչո՞ք ամիս մը առաջ Վարժարանի
Լուսնի մը կար որ 10 միլիոն ժողո-
վուրդ, 150 հազար զօրք, 100ի չափ մեծ
ու պզտիկ պատերազմական նաւ, հա-
զարաւոր թնդանօթ, եւ անբաւ զէնք ու
պատերազմական մթերք ունէր : Նոյնպէս
Հռոմի թագաւորութիւնը մը կար որ 3 մի-
լիոն ժողովուրդ եւ 50 հազար զօրք ունէր,
այս օրուան օրս յիշեալ երկու թագաւորու-
թիւնները լոկ պատմական յիշատակներ
կը սեպուին : Վարժարանի տէրութեան մէջ
միայն Վայեթա քաղաքը մնացած է ու
բոլորն փոյ. զեռ խաղաղան երեք գունով
դրօշակը չճաճանիր, եւ պապական տէ-
րութեան մէջ ալ Հռոմ քաղաքը մնա-
ցած է, որուն համար մեծ քանք կայ յե-
ղափոխութեան ձեռքէն ազատելու :

Յեղափոխութեան այս հիմնային յա-
ջողութեանը պատճառով վերոյիշեալ եր-
կու տէրութեանց 10-12 տարիէ ի վեր
բռնած սխալ ընթացքը եւ այն ընթաց-
քին վրայ կամակորութեամբ յամառիլ
մնալը եղաւ : Փոխանակ իրենց զօրու-
թիւնն ու հաստատութիւնը իրենց հը-
պատակաց գոհութեանը սիրոյն ու հա-
մակութեանը մէջ փնտրելու, մէկը իր
եւ միւսը օտարին սու իններուն ու թըն-
դանօթներուն մէջ փնտրուց . փոխանակ
գարուս ոգւոյն միտ դնելու եւ հնարա-
ւոր զեղծմանով ժողովութեան զգացումը
գոհ ընելու, առաջինը արհամարհեցին,
եւ երկրորդը հեղձուցանել ու զեղծելու
տեսութիւններով, բանտերով, շղթանե-
րով, արքայներով, գաւազանով, սրով
պոկելով : Եւ անկ տնաւանել վիճակ
մը չէր կրնար շարունակել իննեւտաս-
ներորդ դարուս Եւրոպային մէջ, եւ
հարկաւ օր մը փոթաբիւ մը պիտի ել-
էր . Սէսու մը ու Խոսան* անսո-
ւոր կերպով պիտի բորբոքէին : Եւ
րոպայի երկու լուսաւորեալ մեծ տէրու-
թիւնները՝ Վարժարան եւ Լոնդոն* աչ-
քերուն առջեւ կը տեսնէին փառքը,
եւ ստեղծաբարութիւններով կը յոր-
դորէին Վարժարան ու Հռոմի կառավա-
րութիւնները որ իրենց ընթացքը փոխեն,
բայց մտիկ չեղան, եւ վերջապէս դործն
այս վիճակին հասաւ : Վարկայալտի մը եւ
լաւ, քանի մը հարիւր ընկերով Սիկի-
լիա անցաւ, ոտքը ցամաքը դնելուն պէս

բոլոր ժողովուրդն հետը միաբանեցաւ
եւ քանի մը աւուր մէջ Վարժարանի թա-
գաւորին հզօր իշխանութիւնը վերցա-
կղզւոյն մէջէն : Վոյնը եղաւ Վարժարանի ցա-
մաք երկրին եւ Հռոմի տէրութեան մէջ
ալ : Ժողովուրդը փոխանակ իրենց տէ-
րութիւնները պաշտպանելու՝ ոտք ելան,
անոնց թշնամիներուն հետ միացան, վա-
սըն զի անոնց թշնամին իրենց ազատա-
րարն էր իրենց եղբայրն էր . եւ այսպէս
երկու թագաւորութիւն՝ երկուքն ալ լը-
եալ հասարակաց կարծիքէն, երկուքն ալ
բռն իրենց ժողովուրդներուն ատենը,
քանի մը շտաբի մէջ վերցան աշխար-
հիս երեսէն՝ խաղաղան մեծ եւ ազատ
տէրութեան մը տեղի տալու համար :

Եւս երկու թագաւորութեանց առաջե-
նին կործանման պարագաներն արդէն ծա-
նօթ են մեր արդոյ ընթերցողաց . բայց
երկրորդին դեռ նոր հասնիլ սկսած են :
Ուստի նախընթաց երկու թիւերով տը-
ված հեռագրական համառօտ լուրերուն
վրայ աւելի ընդարձակ եւ մանրամասն
տեղեկութիւններ կրնանք տալ այս շաբ-
թու :

Գաղղիացւոց Վ. Վարժարան կայս-
րն ասիկայ քանի մը շտաբի առաջ Սա-
փայի Համպրի քաղաքը դադար ժա-
մանակը, Սարտենիայի Վ. Վիլքսթոր
Լամանուէլ թագաւորին իր կողմէն ներ-
քին դործոց պաշտօնեայ Մ. Ֆարլինի
պատերազմի պաշտօնեայ Ֆանթի զօրա-
պետը եւ Չիալտինի զօրապետը Համ-
պրի իրիկց Վ. Վարժարան կայսրը բա-
րեւելու : Եւս դեսպանութիւնը կատա-
րելով եւ քառանկուն պէս Չիալտինի
զօրապետը Պոլսի գնաց՝ հոն դուար-
ված սարտենիական զօրաց հրամանատա-
րութիւնը ընելու : Մ. Ֆարլինի ալ Պի-
րէնցա գնաց՝ հասարակութեան եռանդը
ուղղելու համար : Ֆանթի զօրապետն
ալ Պապական տէրութեան բաժնիւմ
Ուստի նա զաւուր գնաց ու հոն դու-
արված սարտենիացի զօրաց ընդհանուր
հրամանատարութիւնը վրան առաւ :

Մի եւ նոյն ժամանակ Սարտենիայի
կառավարութիւնը իւր Հռոմի վերջին
դեսպան Մինէրվա մարքիզը ծանուցադ-
րով մը Հռոմ խրկեց պապական կա-
ռավարութեան առաջարկելու որ Լամո-
րիսիէն զօրապետին հրամանատարու-
թեան ներքեւ դուարված օտար զօրքերը
ձարէ . որովհետեւ, կրտսէր ծանուցադ-
րը, Խաղաղական զգացման թշնամանք մըն է
օտար զօրքերու ձեռքը իր ժողովուրդը բաղ-
ձանքը զսպել, որոց ստացուածքը պատին
ու կեանքը այս կերպով բաղդախնդիրներու
հաճոյնը յանձնարված է . եւ խօսքը կը
վերջացնէր իմացընելով որ եթէ Պապին
կառավարութիւնը չհաճի օտարազդի

վարձկան զօրքերն արձակելու, Սարտե-
նիայի զօրքերուն հրաման եղած է որ Հռ-
ոմի տէրութեան գաւառներուն ժողո-
վորոցը պաշտպանութիւն ընեն թէ որ
վերոյիշեալ օտարազդի զօրքերն անոնց
ըրած ազդային եւ հայրենասիրական ցոյ-
ցերը արգիլել ու զեն :

Ֆանթի զօրապետն ալ իր կողմէն
նաւակ մը ղրկելով Լամպրիսիէն զօրա-
պետին՝ իմացուց որ իր թագաւորէն հը-
րաման եղած է իրեն Հռոմի տէրութեան
գաւառները մտնելու թէ որ օտարազդի
զօրքերն ամենափոքր շարժում մը ընեն
ժողովուրդը դէմ :

Մինէրվա մարքիզը նոր մեկնել էր
Թուրինէն, լուր հասաւ հոն թէ Հռ-
ոմի տէրութեան Մարշ եւ Օմպրիա
գաւառներուն զիւստը քաղաքները ոտք
ելիր, Վիլքսթոր Լամանուէլ թագաւո-
րին անունով առժամանակեայ կառա-
վարութիւններ հաստատել են, եւ պատ-
գամաւորութիւններ կը խրկեն Թուրին
Վիլքսթոր Լամանուէլ թագաւորին պաշտ-
պանութիւնն ու օգնութիւնը խնդրելու :

Մինէրվա մարքիզը Հռոմ հասաւ,
ծանուցադրել ներկայացուց պապական
կառավարութեան . բայց պապական կա-
ռավարութիւնը մերժողական պատաս-
խան մը տուաւ Սարտենիայի առաջար-
կութիւններուն : Եւս պատասխանը
Թուրին հասած ժամանակը (սեպտ. 11
լատ.) Մարշ եւ Օմպրիայի պատգա-
մաւորութիւններն ալ հասել էին հոն :
Թագաւորն ընդունեց պատգամաւորնե-
րը, խոստացաւ խնդրելին կատարել, եւ
անմիջապէս հրաման խրկեց Ֆանթի եւ
Չիալտինի զօրապետներուն որ Հռոմի
հոգը մտնեն, ապստամբեալ քաղաքնե-
րուն մէջ բարեկարգութիւն հաստատեն
եւ օտարազդի զօրաց դործողութիւնը
արգիլելով՝ ազատութիւն տան ժողովուր-
դոց իրենց բաղձանքը յայտնելու . բայց
Հռոմ քաղաքն ու Պապին անկախու-
թիւնը յարգեն :

Հետեւեալ օրը Սարտենիայի կա-
ռավարութիւնը ծանուցադր մը խրկեց
բոլոր եւրոպական տէրութեանց՝ Հռոմի
տէրութեան վիճակը հասկըցընելու հա-
մար՝ որ կրնար բոլոր խաղաղական թերա-
կղզին անիշխանութեան եւ ուրիշ գե-
շութեանց մէջ ընկղմել, եւ այս փառն-
գաւոր վիճակին դարման տանիլը Սար-
տենիայի կառավարութեան անհրաժեշտ
պարտաւորութիւնն ըլլալը իմացուց ա-
նոնց :

Բազմի պապական զինուոր գերի բռնեցին
եւ անոնց հետ Պելլա տնտէնով կարգինալ
արքայականոց որ Բէզարօի բերդը
պաշտպանել ուզեց, եւ անօգուտ անցը
քանի մը թնդանօթ արձակելէ ետեւ անձ-
նատուր եղաւ . նմանապէս գերի բռնը-
վեցաւ Հիւս զօրապետը՝ որ անցեալ տա-
րի Հռոմի տէրութեան Բէրուզ քաղա-
քին ապստամբութիւնը զսպելու ժամա-
նակը շատ անգթութիւններ ըրած էր :
Սարտենիացւոց զօրքերը նաեւ Բէրուզ
քաղաքը յարձակամբ առին, եւ այս
կողմէն ժամանակը քահանայմը Սարտե-
նիացի զօրաց թմբկահար մը հրացանով
սպաննելուն համար : Ֆանթի զօրապետն
հրացանի բռնել տուաւ այն քահանայմը
Կալենիւրուն միջոցին Վիլքսթոր, Օրվե-
նի, Բիւլի, Պոլենե, Թուրին, Թեյ-
նի, Թուրինիս, եւ Սարտեն քաղաք-
ներուն բնակիչներն ալ ոտք ելան եւ պա-
պական զինուորներն հալածեցին :

Սեպտ. 6/18 ին Սարտենիացւոց
Չիալտինի զօրապետը Լեքոնայի վրայ
քաղելով, Լամպրիսիէն զօրապետն անոր
վրայ յարձակեցաւ 11 հազար զօրքով
եւ 14 թնդանօթով : Վոյն միջոցին Լե-
քոնայէն ալ 4000 պապական զօրք դուրս
յարձակեցան Սարտենիացիները երկու
կողմանէ զարնելու համար :

Պատերազմը խիստ սաստիկ եւ յա-
մաւ եղաւ . բայց վերջապէս պապական
զօրքերը չբիւժանալով յարձակեցան ցի-
րուցան եղան : Սարտենիացիները 600
գերի բռնեցին որոց մէջ կային 30 պաշ-
տօնակալ եւ Բիւժոտան զօրապետը վե-
րադարձ : Լեքոնայէն դատ 6 թնդա-
նօթ, դրօշակ մը եւ անթիւ գէնք ան-
ցան Սարտենիացւոց ձեռքը :

Լամպրիսիէն զօրապետը քանի մը ձի-
աւորով փախաւ Լեքոնայ մասը :

Եւս պատերազմէն ետեւ պապական
զօրաց մեծ մասը անձնատուր եղաւ, եւ
Լեքոնայի մէջ մնացած զօրքերէն դատ
զօրք չմնաց Հռոմի գաւառներուն մէջ :

Բիւժոտան զօրապետն ալ վերքը ծա-
նոր ըլլալուն համար հետեւեալ օրը մե-
ռաւ :

Վարժարան եկած լուրերը մինչեւ սեպ-
տեմբեր 8/20 կը հասնին :

Վարկայալտ զօրապետին Վարժար-
ան ժամանակը 3500 նաբօթիւն
զօրք քաղաքէն մեկնելով Վայեթա գա-
ցին թագաւորին զօրացը հետ միանա-
լու : Իսկ Վարժարան մնացած զօրաց զուն-
դերը լուծվելով զօրականները յրուեցան :

Թագաւորը նոր կառավարութիւն
մը հաստատեց Վայեթայի մէջ՝ ազա-
տամիտ անձինք իրեն պաշտօնեայ ընա-
րելով :

* Լեքոնայ հրաբուխը լեռներ մէկը Վարժարանի
փոքր Սիկիլիայի մէջ :

Կ.ՊՕԼԻՍ. ՉԻՆԵԼԻ ԽԸՆ